ընդ իւր զՄերզէ և զՍասրով իրր երաշխաւորս Էջմիածնի, և ինքն լեալ իրր երաշխաւոր Երուսաղէմի՝ թեւակից իւր ունելով և զայլս՝ եւ յատեան Եպարքոսին 'ի նստիլ նորա 'ի վրանի՝ բողոքել զեղիազարէ, եդեալ 'ի մտի մահու եւս արժանի ցուցանել զնա. կոչեցաւ անդր և եղիազար իւրովքն հանդերձ. նստեալ էր անդ եւ մեծ դատաւորն Գաղեսքեր՝ և այլ մեծամեծք։ Մատեաւ Մարտիրոս և ասէ՝ 200 քսակս արծաթոյ էառ եղիազարդ այդ յԱստուածատուր Պատրիարքէն Երուսաղէմի և ծախեաց զամենայնն առ 'ի խափանելոյ զհրաման Տէրութեանդ, թող զայլ կահս վանաց զորս վատնեաց՝ և զայսոսիկ քաջ գիտեմ ես, քանզի աշակերտ էի Աստուածատրոյ։ Ասէ Եպարքոսն՝ ո՞րպիսի դրամ էր այն՝ զոր նա էառ. պատասխանի եւ Մարտիրոս. բովանդակն արծաթի դահեկան Ասլանլու։ Ասէ Եպարքոսն. այր դու, այդ չափ դրամ յայդպիսի տիպ և ոչ յիմում գանձի գտանի։ Հարցին և ցեղիազար՝ դու զի՞նչ ասես, նա եւ պատասխանի եւ ասէ. այո, բազում դրամք անցեալ են ընդ ձեռն իմ ընդ ժամանակս ժամանակս 'ի փոխանորդութեան Երուսաղէմի, բայց չիք իմ ընդ վայր ծախեալ և ոչ դրամ մի՝ և ուստի՞ կարէ դա ցուցանել. և ինքն անդէն յառաջ բերեալ զվկայս՝ հաստատեաց զբան իւր։ Խնդրեցան վկայք և 'ի կողմանէ Մարտիրոսի. եւ մի ոմն 'ի Տիվրիկցւոց և վկայեաց՝ բայց անորոշ։ Բարկացեալ ընդ այն Եպարքոսին՝ ասէ ցՄարտիրոսեանն՝ երբ չգիտէք ինչ զյանցանս առնդ՝ եւ ոչ կարէք ցուցանել, զի՞ ժողովեալ էք աստ։

Տեսեալ Մարտիրոսեանց՝ թէ տկարանան բանք իւրեանց՝ սկսան այլ և այլս խօսիլ. ոմանք ասէին թէ նա 'ի մանկութենէ յայլ յօրէնս էր դարձեալ, և այժմ փոխեալէ 'ի Հայութիւն. այլք թէ՝ չինեաց եկեղեցիս 'ի հինդ և 'ի վեց տեղիս, 'ի Ռէմէ, յԵրուսաղէմ, 'ի Պրուսա, և 'ի Կոստանդինուպոլիս, և այլք եւս այլ ինչ։ Հայեցեալ Եպարքոսին 'ի չփոթութիւն բանից նոցա՝ 'ի բաց վարեաց ըզնոսա յատենէ իւրմէ։ Եւ իբրեւ ելանէր Մարտիրոս արտաքս 'ի վրանէ՝ դիմեցին սպասաւորք ատենին 'ի վերայ նորա, և հարկանէին զնա բռնցի և աքացի. նոյնպէս և ոմանք 'ի հարազատ ընկերաց նորա զայրացեալ թշնամանօք նա-